

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ ԵՎ ՕՐԱՆԺ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱԿՆԱԲՈՒՅԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ
«ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆԻ» ԹԵՄԱՅՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ
ՀԱՄԱՐ «ԱԶՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ՊԱՏՐԱՍՏԿԱԾ ԱՌՅԱՆՑ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

Հայկական ակնաբուժության նախագիծ (ՀԱՆ) բարեգործական հիմնադրամ

Ակնաբույժների համար նախատեսված հատվածը հասանելի է <http://test.aecp.am/oph-site/hy/> հղումով: Այն բաղկացած է 2 բաժնից:

Բաժին 1

Մաս 1. Աչքի զննում

- 1.1. Նախնական ակնաբանական և ընդհանուր անամնեզ
- 1.2. Տեսողության սրության ստուգում մանր անցքերով դիաֆրագմայի միջոցով
- 1.3. Բաց/վիակ թեստ
- 1.4. Ակնային շարժումների ստուգում
- 1.5. Տեսադաշտի առճակատման կոնֆրոնտացիայի թեստ
- 1.6. Կարմիր գույնի ընկալման թեստ
- 1.7. Ամսլերի ցանցի թեստ
- 1.8. Առաջային խցիկի խորության գնահատում
- 1.9. Աֆերենտ բբային դեֆեկտ
- 1.10. Օպտիկական կոհերենտային տոմոգրաֆիա:

Մաս 2. Աչքի առաջային հատվածի հիվանդություններ /կոպի, ակնակապիճի, շաղկապենու, եղջերաթաղանթի և ուվեալ տրակտի հիվանդություններ/

2.1. Կոպի/ակնակապիճի հիվանդություններ

Բլեֆարիտ,

Ստաֆիլակոկային,

Սեբորեային,

Դեմոդեկտիկ,

Ցելյուլիտ,

Նախամիջնորմային (պրեսետայալ) ցելյուլիտ,

Ակնակապճային (օրբիտալ) ցելյուլիտ:

2.2. Շաղկապենու/ եղջերաթաղանթի հիվանդություններ

Ալերգիկ շաղկապենաբորբ,
Վիրուսային շաղկապենաբորբ,
Գարնանային կատար,
Աչքերի չորության համախտանիշ,
Եղջերաթաղանթի քերծվածք,
Բակտերիալ կերատիտ,
Հերպետիկ կերատիտ,
Գոտևորոդ հերպես:

- 2.3. Սպիտապատյանի/ուվեալ տրակտի հիվանդություններ
Առաջային ուվեիտ (իրիտ/ իրիդոցիկլիտ),
Հետին ուվեիտ,
Աչքի տոքսոպլազմոզ,
Բեհչեթի հիվանդություն,
Սիմպաթիկ օֆթալմիա:

Մաս 3. Կատարակտ, հետվիրահատական խնամք և բարդություններ

- 3.1. Ոսպնյակի հիվանդություններ

Բնածին կատարակտ,
Ձեռքբերովի կատարակտ,
Տարիքային կատարակտ,
Դեղորայքային/ տոքսիկ կատարակտ (ստերոիդներ, քիմիական նյութեր),
Պսևդոէքսֆոլիացիոն համախտանիշ,
Ոսպնյակի վնասվածքային ենթահոդախախտ և հոդախախտ,
Ձեռքբերովի կատարակտի վարում և բուժում,
Կատարակտի վիրահատության պլանավորում,
Ոսպնյակի հետ կապված երկրորդային գլաուկոմա,
Անզգայացման մեթոդները կատարակտի վիրահատության ժամանակ,
Կատարակտի վիրահատության մեթոդները,
Հետվիրահատական խնամք,
Հետվիրահատական բարդություններ,
Հետին պատիճի պղտորում,
Կատարակտ. ի՞նչ է անհրաժեշտ հիշել:

- 3.2. Էնդօֆթալմիտ

- 3.3. Վիրահատված հիվանդների հսկումը հետվիրահատական շրջանում:

Բաժին 2

Մաս 4. Ապակենման մարմնի, ցանցենու և տեսողական նյարդի ախտահարումներ

- 4.1. Ապակենման մարմնի հիվանդություններ,

Արյունազեղում ապակենման մարմնի մեջ,

Ապակենման մարմնի հետին թաղանթի շերտազատում:

- 4.2. Տեսողական նյարդի ախտահարումներ

Տեսողական նյարդի առաջային իշեմիկ նեյրոպաթիա,

Տեսողական նյարդի հետին իշեմիկ նեյրոպաթիա:

- 4.3. Ցանցաթաղանթի անոթների ախտահարումներ

Ցանցաթաղանթի կենտրոնական զարկերակի խցանում (ՑԿՁԽ),

Ցանցաթաղանթի կենտրոնական երակի կամ երակի երկու ճյուղերի (հեմիոնտինալ) խցանում (ՑԿԵԽ/ՀՌԵԽ),

Ցանցաթաղանթի կենտրոնական երակի ճյուղի խցանում (ՑԿԵՃԽ):

4.4. Դեղին բծի ախտահարումներ

Դեղին բծի տարիքային դիստրոֆիա (ԴԲՏԴ),

Ոչ էքսուդատիվ (չոր) ԴԲՏԴ,

էքսուդատիվ (թաց) ԴԲՏԴ,

Կենտրոնական շճային քորիոռետինոպաթիա,

Դեղին բծի կիստոզ այտուց:

4.5. Ցանցաթաղանթի հիվանդություններ

Ցանցաթաղանթի շերտազատում (ՑՇ),

Ցանցաթաղանթի առաջնային շերտազատում,

Ցանցաթաղանթի երկրորդային շերտազատում. ձգումային (տրակցիոն) և

էքսուդատիվ ՑՇ:

4.6. Համակարգային հիվանդությունների ակնային դրսևորումներ

Շաքարախտային ռետինոպաթիա,

Հիպերտոնիկ ռետինոպաթիա:

Մաս 5. Գլաուկոմա

5.1. Առաջնային բացանկյուն գլաուկոմա

5.2. Նորմալ ճնշումային գլաուկոմա

5.3. Առաջնային փականկյուն գլաուկոմա

5.4. Նեովասկուլյար գլաուկոմա:

Մաս 6. Մանկաբուժական պրակտիկայում հանդիպող աչքի հիվանդություններ

6.1. Անհասության ռետինոպաթիա

6.2. Շլություն

6.3. Ամբլիոպիա

6.4. Քիթ-արցունքային ծորանի խցանում:

Հարցաշարում շոշափվող բոլոր թեմաները ներկայացված են ՀԱՆ-ի հեղինակած և ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված «Ակնաբուժության ընտրանի» ուսումնական ձեռնարկում, որը հասանելի է առցանց ընթերցանության (հղում՝ <http://issuu.com/aecp-armenia/docs/arm/1?e=6316921/6552137>) և ներբեռնելու (հղում՝ <http://test.aecp.am/oph-site/wp-content/uploads/2014/07/AECP-Essentials-Ophthalmology-ARM.pdf>) հնարավորությամբ:

Յուրաքանչյուր բաժին ուղեկցվում է նաև համապատասխան վիդեո-պրեզենտացիայով՝

Մաս 1. Աչքի զննում - «Ախտորոշման մեթոդները»

Մաս 2. Աչքի առաջային հատվածի հիվանդություններ – «Կերատիտ»

Մաս 3. Կատարակտ, հետվիրահատական խնամք և բարդություններ – «Կատարակտ»

Մաս 4. Ապակենման մարմնի, ցանցենու և տեսողական նյարդի ախտահարումներ -

«Շաքարախտային ռետինոպաթիա» և «Դեղին բծի տարիքային դիստրոֆիա»

Մաս 5. Գլաուկոմա – «Գլաուկոմա»

Մաս 6. Մանկաբուժական պրակտիկայում հանդիպող աչքի հիվանդություններ - «Անհասության ռետինոպաթիա»:

Յուրաքանչյուր մասի նյութն ընթերցելուց և վիդեո-պրեզենտացիան դիտելուց հետո մասնակիցը լրացնում է հարցաշարը: Հարցաշարի հարցերի քանակը ներկայացված է ստորև՝

Մաս 1. Աչքի զննում – 10 հարց

Մաս 2. Աչքի առաջային հատվածի հիվանդություններ – 35 հարց

Մաս 3. Կատարակտ, հետվիրահատական խնամք և բարդություններ – 30 հարց

Մաս 4. Ապակենման մարմնի, ցանցենու և տեսողական նյարդի ախտահարումներ – 55 հարց

Մաս 5. Գլաուկոմա – 45 հարց

Մաս 6. Մանկաբուժական պրակտիկայում հանդիպող աչքի հիվանդություններ – 25 հարց:

Հարցաշարի սահմանված անցումային շեմը 80% է:

Ընդհանրական բժիշկների համար նախատեսված կրթական նյութը հասանելի է <http://test.aecp.am/fmd-site/hy/> հղումով և ընդգրկում է հետևյալ մասերը՝

Մաս 1. *Աչքը որպես օպտիկական համակարգ*

1.1. Աչքի անատոմիան և ֆիզիոլոգիան,

1.2. Աչքը որպես օպտիկական համակարգ:

Մաս 2. *Աչքի հետազոտություն*

2.1. Ախտորոշման մեթոդները

Աչքի նախադեպային և ընդհանուր հիվանդությունների անամնեզ,

Աչքի հիվանդության անամնեզ,

Համակարգային հիվանդությունների պատմություն,

Ընտանիքում աչքի և այլ հիվանդությունների պատմություն,

Աչքի ստուգման քայլերը,

Տեսողության սրության ստուգում,

Հեռու տեսողության սրության ստուգում,

Տեսողության սրության ստուգում մանր անցքերով դիաֆրագմայի միջոցով,

Տեսողության սրության ստուգումը թույլ տեսողության դեպքում,

Տեսողության սրության ստուգում մոտիկ հեռավորության վրա,

Տեսադաշտի առճակատման (կոնֆրոնտացիայի) թեստ,

Ամսլերի ցանցի թեստ,

Ակնային շարժումների ստուգում,

Արտաքին զննում,

Վերին կոպի արտաշրջում,

Եղջերաթաղանթի զննում ֆլուորեսցենով,

Ծանձաղ առաջային խցիկի և առաջային խցիկի նեղ անկյան հայտնաբերման ստուգում,

Բքի ուղիղ և համաձայնեցված ռեակցիայի ստուգում,

Բիբերի լայնացում,
Ուղղակի օֆթալմոսկոպիայի մեթոդ,
Կարմիր ռեֆլեքս,
Տեսանյարդի սկավառակ,
Ցանցաթաղանթի արյան շրջանառություն,
Ներակնային ճնշման չափում,
Հիվանդի ուղեգրման ցուցմունքներ,
Հիվանդի ուղեգրումը կատարվում է հետևյալ դեպքերում,
Տեսողության սրության նվազում,
Ակնահատակի ախտահարումներ,
Առաջային խցիկի նվազած խորություն կամ բարձր ներակնային ճնշում:

- 2.2. Կլինիկական հնտություններ
Աչքի կաթիլների և քսուքների օգտագործում,
Նախապատրաստական գործողություններ,
Աչքի կաթիլների կաթեցում,
Քսուքների օգտագործում,
Աչքի լվացում,
Ճնշող վիրակապ և վահանակով ծածկոց,
Օտար մարմնի հեռացում:

Մաս 3. Աչքի հիվանդություններ

- 3.1. Կոպեր/ակնակապիճ,
Շաղկապենի,
Եղջերաթաղանթ,
Առաջային խցիկ. տեսողությանը սպառնացող վիճակներ,
Ծիածանաթաղանթ, ծիածանաթաղանթի բորբոքում/ ակնագնդի անոթապատյանի բորբոքում,
Ոսպնյակ,
Ապակենման մարմին,
Աչքի հատակը:
- 3.2. Աչքի անհետաձգելի դեպքեր
Աչքի քիմիական այրվածքներ,
Աչքի լվացում,
Ցանցաթաղանթի կենտրոնական զարկերակի խցանում,
Փականկյուն սուր գլաուկոմա,
Աչքի վնասվածքներ:
- 3.3. Գլաուկոմա
- 3.4. Համակարգային հիվանդությունների ակնային ախտանիշները
Շաքարային դիաբետ,
Զարկերակային հիպերտոնիա:
- 3.5. Վիրահատված հիվանդների հսկումը հետվիրահատական շրջանում
Հետվիրահատական խնամք,
Էնդօֆթալմիտ:

Հարցաշարում շոշափվող բոլոր թեմաները ներկայացված են ՀԱՆ-ի հեղինակած ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված «Աչքի հիվանդություններ» ուսումնական ձեռնարկում, որը հասանելի է առցանց ընթերցանության (հղում՝ <http://issuu.com/aecp-armenia/docs/fmd-book-aecp/1?e=0/2208276>) և ներբեռնելու (հղում՝ <http://test.aecp.am/fmd-site/wp-content/uploads/2013/11/fmd-book-aecp.pdf>) հնարավորությամբ:

Յուրաքանչյուր մաս ուղեկցվում է նաև համապատասխան վիդեո-պրեզենտացիայով՝
Մաս 1. Աչքը որպես օպտիկական համակարգ - «Աչքի անատոմիա»
Մաս 2. Աչքի հետազոտություն - «Ախտորոշման մեթոդները»
Մաս 3. Աչքի հիվանդություններ - «Աչքի հիվանդություններ»

Յուրաքանչյուր մասի նյութն ընթերցելուց և վիդեո-պրեզենտացիան դիտելուց հետո մասնակիցը լրացնում է հարցաշարը: Հարցաշարի հարցերի քանակը ներկայացված է ստորև՝

Մաս 1. Աչքը որպես օպտիկական համակարգ – 40 հարց
Մաս 2. Աչքի հետազոտություն – 30 հարց
Մաս 3. Աչքի հիվանդություններ – 50 հարց

Հարցաշարի սահմանված անցումային շեմը 80% է:

Առցանց հարթակի էլեկտրոնային կրթական նյութերի հեղինակներն են Հայկական ակնաբուժության նախագծի հիմնադիր նախագահ Ռոջեր Օհանեսյանը և Հայկական ակնաբուժության նախագծի բուժկրթական ծրագրերի տնօրեն Մարիաննա Շահումվարյանը: